Բ) Օսմանեան Հայաստանի գաւառները. 1) Էրզրում, 2) Խարբերդ, 3) Տիարբէքիր, 4) Մուշ, 5) Քիւրդստան, 6) Վան և 7) Բայազիտ։

Գ) Պարսկական Հայաստանի գաւառները. 1) Մակու և 2) Թաւրէզ.

Բնական պատմութենից. — Անողնաշար կենդանիների հատուածի յատկութիւնները. այդ հատուածին վերաբերեալ կենդանիների մարմինների կազմութեան և զանազան գործարանների գործութեան նկարագրութիւնը. Մասերի, դասերի և կարգերի ընդհանուր յատկութիւնները. Բոյսի սերմը, նորա մասերը և աճումը. Մորֆոլոգիական տեսութիւն բոյսի գլխաւոր գործարանների (արմատ, բուն, տերև, ծաղիկ և պտուղ). Բոյսի տարրական կազմութիւնը (վանդակներ, անօթներ և բուսական հիւսուածներ). — Բոյսի սնունդը և բազմանալը. (Ձեռնարկներն են. կենդանաբանութեան համար Зоологія Герда և Зоологія Григорьева, իսկ բուսաբանութեան համար Начатки Ботаники Гукера):

Թուաբանութենից. հասարակ և տասնորդական կոտորակները ամբողջապէս. Պարզ և բարդ երկրորդական կանոն. Պարզ և բարդ տոկոսների կանոն. մուրհակների զեղչման կանոն. Օղակաւոր կանոն. ընկերութեան կանոն. խառնուրդի կանոն, առանձին ուշադրութիւն դարձնելով փորձերի (պրոբներին) վերաբերեալ խնդիրներին.

(Դասագիրք Մարտիրոս Սիմէօնեանի, Խնդիրների գիրք. Եւտուշևսկու երկրորդ մասը.)

ՀՐԱՀԱՆԳ

ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՈՐՔ ԿԱՄԻՑԻՆ ՄՏԱՆԵԼ ՅԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ Ս. ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ.

Ըստ հրամանի Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց վարչութիւն Գէորգեան ճեմարանի Սրբոյ Էջմիածնի սահմանեաց զհետեւեալ կանոնս:

Ա. Ընտրութիւն աշակերտաց լիցի ընդ ձեռն Առաջնորդաց կամ Առաջնորդական փոխանորդաց խորհրդակցութեամբ ընդ Թեմական Տեսչաց, որք պարտին ի ժամ ընտրութեանն յուշ ածել թէ հիմնական նպատակ ճեմարանի է պատրաստել ուսուցիչս ի պէտս Հայկական դպրոցաց եւ հոգեւորականս Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Բ. Յայտարարութիւնք Առաջնորդաց վասն ընտրութեան աշակերտաց մատուցանին յանուն Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց:

Գ. Աշակերտք ընտրելի են առաւելապէս յայնպիսի հայաբնակ տեղեաց, յորս չեւ եւս գտանին կանոնաւոր դպրոցք:

Դ. Ընտրելիքն լինիցին որդիք չքաւոր ծնողաց:

Ե. Ամ հասակի ընտրելեացն պարտին լինել ոչ պակաս քան զերկոտասան եւ ոչ աւելի քան զչորեքտասան:

Զ. Պարտ է նոցա քաջառողջ լինել եւ ունել ուշիմութիւն եւ բարեբարոյութիւն:

Է. Ընտրեալքն ունիցին վկայագիրս 1, գաւառագրական (մետրիքական) ծննդեան

եւ մկրտութեան եւ 2, գիտնական բժշկի, զի ծանեալ են զծաղիկ բնական կամ ընկալեալ պատուաստ ծաղկի:

Ը. Աշակերտ որ որ գայցէ ի քաղաքաց կամ ի գիւղօրէից եկեղեց տաւարոյ Արարատեան դաշտի, պարտի բերել յաւուր քննութեան բաւն եւ ծնող կամ աւելի ըստ հետաւորութեան վայրացն, որպէս զի եթէ հարկ լիցի դառնալ նմա ի հայրենիսն, մի ծանրասցին ծախք ճանապարհին ի վերայ ճեմարանի: Եթէ աշակերտն այն կայցէ ի ճեմարանի մինչեւ ցաւարտ ուսումնական ընթացիցն, զումարն այն յանձնեսցի նմա ամբողջ յելանելն: Նոյնպէս ի թեթեւութիւն ակզբնական ծախուց ճեմարանի, ի վերայ միոյ միոյ նորամուտ աշակերտի, եթէ որ ի նոցանէ ոչ իցէ ի յոյժ չքաւորաց, պարտի բերել ընդ իւր 4 շապիկ, 4 անդրավարտիք, 4 զոյգ գուլպայ, 4 թաշկինակ, 1 ծանդերծ խալիճակ պարզունակ կապուէ բլրոց ահաւանեալ եւ 1 փարտիք ի նոյնպիսի կըտաւէ, 1 զոյգ կօշիկ եւ 1 գոտի կաշեայ:

Թ. Ընտրեալքն յաշակերտութիւն ճեմարանի պարտին գալ ի Ս. Էջմիածին ց25 օգոս. ամսոյ, միով եօթնեկաւ յառաջ քան զսկզբնաւորութիւն տարեկան դասատուութեան.

Ժ. Զժամանակ ամառնային աւուրց հանգստեան անցուցանեն աշակերտք ի ճեմարանի, պարապելով ի թեթեւագոյն վարժս ուսմանց եւ ընթերցանութեան: — Միայն աշակերտաց Չորրորդի դասարանին, որք զմնութեամբ լրացուցեն ի նմին զուսմունսն, թոյլատրի գնալ ի հայրենիս իւրեանց առանձին ծախուք ծնողացն կամ առաջնորդաց գնալ յետ տարեկան հարցաքննութեան երկամսեայ եւ հանգստեան աւուր ժամանակաւ, այս ինքն ի 10րդ օրէ յուլիսի ց25 օգոստոսի:

ԺԱ. Ուսմունքն զորոց հարցաքննելի են աշակերտք ցանկացողք մտանել յԱռաջին դասարան*) ճեմարանի են.

1. Կրօնագիտութիւն — Հայր մեր, Հաւատով խոստովանիմ, Հաւատամք ի մի Աստուած, Ողորմեա, (ուսեալք ի բերան): Այլեւ ի հին եւ ի նոր Կտակարանաց — Ստեղծագործութիւն, Անկումն նախածնողաց, Աբրահամ, Իսահակ, Յովսէփ, Յոբ, Մովսէս, Սամուէլ, Դատաստան Սողոմոնի, Տոբիթ, Երեք մանկունք, Շամունէ եւ որդիք նորա, Մանկական կեանք Յիսուսի առ ծնողսն, Քարոզութիւն նորա ի Տաճարն յերկոտասանամեայ հասակի, Օրհնելն զմանկունսն: Առակք — Անառակ որդի, Սերմանացան, Տասն կուսանք, Տասն քանքարք: Հրաշք ի Կանա, Բժշկութիւն դստեր Յայրոսի եւ ծառային հարիւրապետի:

2. Լեզու Հայոց — Հոլովմունք անուանց եւ դերանուանց եւ խոնարհմունք բայից: Որոշումն մասանց բանի եւ թարգմանութիւն պատմական մասանց Աւետարանին ըստ Ղուկասու:

5, Թուաբանութիւն — Հաշուել գլխաւորական եւ զանազանական թիւս մինչ ի 400 ի ձեռն Ետուշնակեայ:

(*) Աշակերտք ընկալեալք լինին քննութեամբ ի ճեմարանն եւ յերկրորդ դասարանս ըստ աստիճանագրութեան ուսմանցն ի նոսին, որք հրատարակեսցին յԱրարատ ամսագրին, ունելով որոց մտանեն յերկրորդ դասարան առ Հասակի Հնդետասան եւ յերրորդն ամս վեշտասան իսկ զայլ պայմանս ըստ յօդուածոցն Ա. Բ. Գ. Զ. Է. Ը. եւ Թ. պարտին ունել լինելն. նոյնպէս եւ զառանձինն յօդուածն առնուլ ի նկատողութիւն.

4. Լեզու Ռուսաց — Վարժ ընթերցանութիւն, թարգմանել ի ռուսերէնէ ի հայ զթեթեւ նախադասութիւնս յառաջին եւ յերկրորդ մասանց դասագրոցն յօրինեալ ի Տէր Յակոբեանէ։ Եւ

5. Վայելչագրութիւն հայերէն եւ ռուսերէն։

ԺԲ. Եթէ դժուարանան Առաջնորդք եւ Թեմական Տեսուչք գտանել զաշակերտացուս անթերի պատրաստեալս վասն առաջնոյ դասարանին յայնպիսի տեղիս, ուր չիցեն կանոնաւոր դպրոցք (յօդ. Բ.), խնամս ունիցին ի վերայ նոցա առ ժամանակ մի տալով զայնսիկ յուսումն ի մերձակայ կանոնաւոր դպրոցս ի պատրաստութիւն եւ ապա առաքել ի Ճեմարան։

ԺԳ. Եթէ նորամուտ աշակերտք ոչ ունիցին զպայմանան զամենայն ի վեր անդր նշանակեալս, յետս դարձուցանիցեն աւանդադրամովքն, զոր բերեալ են։

Ի 10 Դեկտեմբերի 1879 ամի

Ի Ս. Էջմիածին.

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐ.

Ի 23 Նոկտեմբերի 1879 ամի։ Որպէս ի բանից վերոյգրեալ յայտարարութեան Գէորգ Արքեպիսկոպոսի տեսանի զի մինչ նա ինքն Գէորգ Արքեպիսկոպոսն, զբազում ժամանակս կացեալ ի Պիատիգորսկի, եթէ ինքնին եւ եթէ ի ձեռն Յովհաննէս վարդապետի աշխատ լեալ ի վերջոյ դժուարացեալ է համոզել զժողովրդականս Գէորգեւսկոյ, ի համաձայնութիւն առ ի տալ ի գումարաց եկեղեցւոյ տեղւոյն զ5000 րուբլիս փոխարինաբար ի պէտս աւարտման շինուածոց նորոց կառուցանելի եկեղեցւոյն Պիատիգորսկոյ, զիա՛րդ ապաքէն Սարգիս քահանայն տեղւոյն կարէր յաջողել ի կատարել զյանձնարարեալդ փոխարինութիւն. մանաւանդ թէ զինչ օգուտ կամ վնաս էր քահանային ի տուչութենէ դրամոց, երբ ծայրագոյն հոգեւոր իշխանութեան կամք էին եւ են յառաջ տանել զմտադրութիւն աւարտման եկեղեցաշինութեան։ Ուստի եւ յայս նուագ ըստ նախընթաց հաճութեան Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց պատուիրել Նորին գերապատուութեանն զամենայն զհնարաւոր միջոցս եւ զեղանակս ի գործ դնել եւ համոզել զժողովուրդս Գէորգեւսկոյ, տալ փոխարինականն կարգաւ ի գումարաց եկեղեցւոյ իւրեանց զ5000 րուբլիս, ի պէտս շինութեան եկեղեցւոյն Հայոց Պիատիգորսկւոյ համաձայն դրաւոր խոստմանց նոցին, նաեւ յանձնել միում ի բարեյոյս անձանց զժապաւինեալ մատեան ի Թեմական ատենէն Աստրախանու, որպէս զի ընկալցի եւ արձանագրեսցէ զնուէրս, որք դիմենն ի համառային ջերմուկս ի Պիատիգորսկ. տալով ստորագրել նուիրատուացն յանուն եւ ի նպաստ շինութեան եկեղեցւոյ տեղւոյն մինչեւ ցաւարտելն, ըստ որում հասեալ է ի տեղեկութիւն Սինոդիս, զի եւ 5,000 րուբլիքն փոխարինելիք ի Գէորգեւսկոյ չեն բաւական վասն աւարտելոյ զշինուածն եւ կարօտի այլ եւս բազում դրամոց. միանգամայն զամենայն ջան եւ զփոյթ կալնուլ ի վերջաւորել զյիշատակեալ փոխատուութիւնն եւ ընդունել զնպաստս ի ձեռնհաս ազգայնոց առ ի աւարտել զշինուածն. որպէս զի մի՛ բնաւ տեղի տացի ժողովրդականացն վերստին ծանծրացուցանել զՆորին Վեհափառութիւնն եւ զՍինոդս նորոց խնդրագրութեամբք ըստ այսմ առարկայի, իսկ յետ աւարտման շինութեան յիշեալ եկեղեցւոյ. կարգադրել այնպէս զի յարգեանց աւուր օծման եկե-